ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1086-Ա/2 **25.08.2020 թ.**

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանով հաստատված «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման» կարգի 4-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել.

1) պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց 2020 թվականի պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ընթացակարգը՝ համաձայն Հավելված N 1-ի:

2) պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ընդունող հանձնաժողովի կազմը (այսուհետև՝ ընդունող հանձնաժողով)՝ համաձայն Հավելված N 2-ի:

2. Ընդունող հանձնաժողովին.

1) Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար փաստաթղթերի ընդունումը կազմակերպել տվյալ տարվա սեպտեմբերի 7-

ից հոկտեմբերի 16-ը ներառյալ:

2) փաստաթղթերի ընդունումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ կազմակերպող տվյալ տարվա պետական կամ հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) ցանկը և քննական առարկաների ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ժամանակացույցն ըստ մասնագիտությունների:

3. Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպել տվյալ տարվա համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված պետական կամ հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների փաստաթղթերի ընդունելության հայտարարությունը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

X

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
25.08.2020 թ. N **1086-Ա/2** հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց 2020 թվականի պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական հաստատության շրջանավարտը (այսուհետ՝ շրջանավարտ) սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) է ներկայացնում.

1) լրացված դիմում-հայտ՝ համաձայն Ձև 1-ի.

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ու ներդիրի (միջուկի) (չներկայացնելու դեպքում բացատրություն ներդիրի բացակայության վերաբերյալ) բնօրինակները և պատճենները.

3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը և պատճենը.

4) 2 լուսանկար (3 X 4 չափի):

3. Դիմում-հայտը լրացվում և պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են նախարարություն շրջանավարտի կամ նրա լիազորված անձի կողմից՝ ներկայացնելով համապատասխան լիազորագիր:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետև՝ նախարար) հրամանով ստեղծված ընդունող հանձնաժողովի քարտուղարի կամ նրա բացակայության դեպքում ընդունող հանձնաժողովի անդամի կողմից

ստուգվում է դիմում-հայտի լրացման ճշտությունը, այն վավերացվում և ստացական է տրվում ընդունված փաստաթղթերի վերաբերյալ, որի մասին շրջանավարտը կամ նրա կողմից լիազորված անձը ստորագրում է գրանցման մատյանում:

5. Դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունող հանձնաժողովի քարտուղարը ստորագրում է հայտերի բազայի մասին տեղեկանքը, որտեղ նշվում է դիմում-հայտերի քանակը, ամփոփիչ ատեստավորման քննությունների ընդհանուր թիվը և այն ներկայացվում է ընդունող հանձնաժողովի նախագահին:

6. Փաստաթղթերի ընդունումից հետո, 7 աշխատանքային օրվա ընթացքում պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպելու համար սահմանված կարգով նախարարի հաստատմանն է ներկայացվում պետական կամ հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի 5-րդ կետով սահմանված տեղեկանքը:

7. Ընդունող հանձնաժողովի կողմից կազմվում են քննական թերթիկներ, որտեղ նշվում են ամփոփիչ ատեստավորման քննությունները, դրանց հանձնման օրերը և ժամերը, ընտրված ուսումնական հաստատությունը: Քննական թերթը ստանալու համար ս/թ հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 2-ը ներառյալ ժամը 10-00 մինչև 17-00 (ընդմիջումը՝ 13-00-ից 14-00) ընկած ժամանակահատվածում շրջանավարտը կամ նրա կողմից լիազորված անձը նախարարություն ներկայացնում է անձնագիր և սույն ընթացակարգի 4-րդ կետում նշված ստացականը: Քննական թերթիկը տրամադրվում է ընդունող հանձնաժողովի քարտուղարի կամ նրա բացակայության դեպքում ընդունող հանձնաժողովի որևէ անդամի կողմից, որի համար շրջանավարտը կամ նրա կողմից լիազորված անձը ստորագրում է գրանցման մատյանում:

8. ՈՒսումնական հաստատության տնօրենը, նախարարի հրամանով պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակելուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների անվանական կազմը:

9. Ամփոփիչ ատեստավորման քննության օրվանից առնվազն երեք շաբաթ առաջ ուսումնական հաստատությունը քննական հարցաշարը, որը կազմվում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան, ներկայացնում է նախարարությանը՝ www.escs.am պաշտոնական կայքում տեղադրելու համար,

ինչպես նաև ուսումնական հաստատությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում (առկայության դեպքում):

10. Քննություններից մեկ աշխատանքային օր առաջ ընդունող հանձնաժողովի քարտուղարը՝ ընդունող հանձնաժողովի նախագահի կողմից ըստ առարկաների քննություն հանձնող շրջանավարտների հաստատված անվանացանկը և սույն ընթացակարգի 2-րդ կետով սահմանված նախարարություն ներկայացված փաստաթղթերը հանձնում է պետական ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահին:

11. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքի վերահսկողությունն իրականացվում է նախարարի կողմից հաստատված նախարարության լիազոր ներկայացուցիչների կողմից:

12. Հանձնաժողովի նախագահը և նախարարության լիազոր ներկայացուցիչը նախքան շրջանավարտների քննասենյակ մտնելը ստուգում են անձը հաստատող փաստաթղթի և քննական թերթիկի համապատասխանությունը:

13. Քննական գնահատականների գրանցումը կատարվում է քննություն անցկացնող ուսումնական հաստատության նախապես համարակալված և կնքված մատյաններում: Կազմվում է նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրություն, որի մեջ նշվում են ամփոփիչ ատեստավորման քննությունների գնահատականները, հատուկ կարծիքները և այլն:

14. Տվյալ օրվա համապատասխան քննական առարկայի քննական տեղեկագրերի մեկ օրինակը նախարարության լիազոր ներկայացուցիչը, քննությունների ավարտից անմիջապես հետո ներկայացնում է ընդունող հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին: Արձանագրությունները և քննական տեղեկագրերը ստորագրում են ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահը, անդամները և նախարարության լիազոր ներկայացուցիչը:

15. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) ենթակա է բողոքարկման՝ համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների.

1) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից իր գնահատականի վերաբերյալ պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները հայտարարելուց հետո, մեկ ժամվա ընթացքում,

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,

3) քննական հանձնաժողովը մերժում կամ փոփոխում է գնահատականը՝ պատճառաբանված հիմնավորմամբ, այդ մասին տեղյակ պահելով շրջանավարտին:

4) Գնահատականը փոփոխելու դեպքում այն վավերացվում է քննական հանձնաժողովի նախագահի կողմից, որի համար քննական տեղեկագրում հանձնաժողովի նախագահը տվյալ շրջանավարտի հերթական համարը վերցնում է շրջանակի մեջ, դրա դիմաց կատարում է «Գնահատականը փոփոխված է» նշումը և ստորագրում: Փոփոխված գնահատականն անց է կացվում նոր տեղեկագրի մեջ: Գնահատականների փոփոխությունն արձանագրվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

16. Պետական նմուշի դիպլոմների հատկացման համար ընդունող հանձնաժողովը նախարարին է ներկայացնում հաշվետվություն, որտեղ նշվում են տվյալ ուսումնական հաստատության շրջանավարտների անունները, ազգանունները, հայրանունները և քննական հանձնաժողովների որոշումները:

17. Շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ հանձնվում է նախարարի համապատասխան հրամանի հիման վրա:

18. Ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ և ներդիր (շրջանավարտի կողմից ներդիր ներկայացնելու դեպքում՝ պահպանելով ներկայացված նախկին դիպլոմի ներդիրի ընթացիկ գնահատականները) տրվում են քննությունները կազմակերպած ուսումնական հաստատության կողմից, համապատասխան մասնագիտության քննական հանձնաժողովի նախագահի և քննությունն անցկացրած ուսումնական հաստատության տնօրենի ստորագրությամբ՝ վավերացված այդ ուսումնական հաստատության պետական զինանշան ունեցող կնիքով:

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2020թ. -ի N -------- հրամանի

ԿԱԶՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Արտակ Աղբալյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
2. Կարեն Մանուկյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության ուսուցման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար),
3. Հասմիկ Մանուկյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ,
4. Օֆելյա Գրիգորյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության դիտարկումների և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,
5. Անահիտ Վահրամյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության ուսուցման բաժնի ավագ մասնագետ:

Ձև 1

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի -ի N հրամանի

1 Գրանցամատյանի անձնական համարը							

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏ

2 Անձնագիր								
սերիա		համար						

3

Ազգանուն

Անուն

Հայրանուն

4 Բնակության հասցեն

քաղաք/գյուղ_____

մարզ_____

փողոց_____

տուն/շենք_____ բն._____ հեռախոս_____

5 Քաղաքացիությունը ՀՀ ԱՊՀ Այլ

6

(ուսումնական հաստատության անվանումը և հասցեն (քաղաք,գյուղ, մարզ)

(կրթական ծրագիրը, մասնագիտությունը, ավարտական փաստաթղթի անվանումը)

7 Հանձնել եմ ավարտական քննություններ /դիպլոմային աշխատանք/ հետևյալ առարկաներից

ԱՌԱՐԿԱ	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ /գրավոր, բանավոր/	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
1		
2		
3		

Դիմող՝			
	ստորագրություն		*ազգանուն, անուն*
Քարտուղար՝			
	ստորագրություն		*ազգանուն, անուն*
“____” _____ 2020թ.			Կ.Տ

✂ ✂ ✂ ✂ ✂ ✂ ✂ ✂

<u>ՍՏԱՑԱԿԱՆ</u>

1 գրանցամատյանի անձնական համարը							

Դիմող՝ _____

ազգանուն, անուն, հայրանուն

Պետական հավատարմագրում չունեցողշ միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար 2020թ. պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար ներկայացրել եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում	4. Դիպլոմի միջուկի բնօրինակը և պատճենը
2. Անձը հաստատող փաստաթուղթ և պատճենը	5. 2 լուսանկար (3x4 սմ չափսի)
3. Դիպլոմի բնօրինակը և պատճենը	6. _____

Դիմող՝			
	սպորագրություն		*ազգանուն, անուն*
Քարտուղար՝			
	սպորագրություն		*ազգանուն, անուն*

***Քննական թերթիկը տրվելու է ս/թ ս/թ հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 2-ը ներառյալ:**